

Սուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թիւ 175

Արդարացնող հաւատքը անկատար է – Երբ մենք առաջին անգամ հաւատում ենք, թէպէտ մեր հաւատքը իսկական հաւատք է, սակայն այդ փոքր, թոյլ ու տհաս է, որը աճում է մեր կեանքի ընթացքում (Բ. Թեսաղոնիկեցիս 1:3): Մենք տեսնում ենք այս Աբրահամի եւ Սարայի կեանքումն (Ծննդոց 16, 17:17): Զաքարիայ կեանքումը (Ղուկաս 1:19-20), այդ հոր պատմութեանը մէջ որը աղաչեց Յիսուսից որ բժշկէ իր դիւահար որդուն, ասելով թէ՛ «Հաւատում եմ, Տէր, իմ անհաւատութեանն օգնիր» (Մարկոս 9:24): Մենք նաեւ տեսնում ենք այս աշակերտների կեանքումը որոնք Ղուկաս 17:5ում ասեցին Յիսուսին՝ «Մեր հաւատքն անկատար է»: Այս ճշմարտութիւնը դարձեալ յստակօրէն ցուցադրում է որ մեր արդարացումը անկարելի է որեւէ կերպով հիմնաւորւած լինի մեր հաւատքի կամ որեւէ մեր կատարած բանի վրայ, քանի որ այսպէս բաներ շարունակաբար լինելու են կասկածի, անհաւատութեան ու մեղքի հետ խառնուած այս կեանքումը, եւ ոստի մեր արդարացումը պիտի տատանւէր պահից պահ: Բայց փառք Աստծուն որ մեր արդարացումը չի տատանուում, եւ կատարեալ ու լրացած էր հենց այն պահին որ հաւատացինք Քրիստոսին, եւ կ'մնայ այսպէս մեր կեանքի ընթացքում՝ քանի որ այդ հիմնաւորւած է Յիսուս Քրիստոսում, որն է միմիայն կատարեալ ու հաւատարիմ: Հակառակ այլ արդարացման դիտանկիւններին, մենք արդար ենք հռչակուում այն պահին որ վստահում ենք Քրիստոսին, եւ ոչ երբ մենք իրապէս արդար ենք դառնում:

Երբ մենք հաւատացինք Քրիստոսին, բոլոր մեր մեղքերը՝ անցեալ, ներկայ ու ապագայ, Աստծուց ներուցին (Կողոսացիս 2:14, Եբրայեցիս 10:12-14), եւ մենք երբէք չենք ընկնի արդարացման դիրքից (Յովհաննէս 10:28, Եբրայեցիս 12:2). սակայն, այս կեանքում մենք կ'մեղանջենք, եւ թէկուզ այդ չի ազդի մեր արդարացումը, սակայն այդ կ'լարի կամ կ'տկարացնի մեր հաղորդակցութիւնը Աստծոյ հետ, ուր մենք տրամեցնում ենք Սուրբ Հոգուն եւ կրում ենք Աստծոյ տիտանութիւնն ու խրատանքը (Յոր 5:17-18, Եփեսացիս 4:30, Եբրայեցիս 12:5-11): Մրա պատասխանն է որ շարունակաբար խոստովանենք ու ապաշխարենք մեր մեղքերից (Մաղմուս 32:5, Մատթէոս 6:12, Ա. Յովհաննէս 1:8-9, 2:1-2, Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակ 11:5):

Արդարացած ժամանակում – Յաջորդ կէտը որը պէտք է որ մենք նկատի առնենք այն է որ թէպէտ բոլոր յաւիտենականութիւնից Աստուած հրովարտակել է արդարացնել եւ փրկել ամբողջ ընտրեալներին (Հռովմայեցիս 8:29-30, Եփեսացիս 1:3-5, Բ. Տիմոթէոս 1:9, Ա. Պետրոս 1:2), եւ թէպէտ Քրիստոսը եկաւ ու կատարեց փրկութեան գործը պատմութեան մէջ (Գաղատացիս 4:4, Ա. Պետրոս 1:20-21), սակայն ընտրեալները արդարանում են միայն երբ Սուրբ Հոգին մատակարարում է Քրիստոսի գործը նրանց (Գործք Առաքելոց 16:31, Հռովմայեցիս 10:13): Մենք չեկանք այս աշխարհքը մի արդարացած դիրքում, եւ նախքան հաւատայինք Քրիստոսին մենք Աստծոյ բարկութեան տակն էինք (Հռովմայեցիս 6:17-18; Եփեսացիս 2:1-5, 8, Կողոսացիս 1:21-23): Միայն այն ժամանակ երբ մենք հաւատանք Քրիստոսին ապա Նրա գործի բարիքները իրականացւում են մեր կեանքերումը (Հռովմայեցիս 5:1: 8:1, Տիտոս 3:4-7, Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակ 11:4):

Բոլոր հաւատացեալներ արդարացած են նոյն ձեւով – Ի վերջոյ, մենք հաստատում ենք որ հաւատացեալները Հին Կտակարանում արդարացան նոյն ձեւով ինչպէս հաւատացեալները Նոր Կտակարանում (Ուէստմինստրը Հաւատոյ Հանգանակ 11:6): Թէպէտ կային կառավարութեան եւ ժամանակաւոր տարբերութիւններ փրկանաւորութեան պատմութեան տարբեր ժամանակաշրջաններում, սակայն մարդիկ երկու Կտակարաններում էլ փրկուցին եւ փրկուում են մէկ եւ նոյն ձեւով, միեւնոյն շնորհքի ուխտի տակ, քանի որ նրանց փրկութեան հիմքը մէկ եւ նոյնն է՝ միայն Քրիստոսի կատարեալ գործը, եւ դրա ստանալու ճանապարհը մէկ եւ նոյնն է՝ միայն հաւատքի միջոցովը: Թէպէտ Հին Կտակարանում Աստուած ընդունեց կենդանական զոհաբերութիւններ, սակայն մարդիկ չէին փրկուում դրանց միջոցով ոչ էլ օրէնք պահելու միջոցով (Եբրայեցիս 9:9, 10:1, 4). որովհետեւ դրանք չէին կարող յագեցնել Աստծոյ արդարութիւնը: Իսկ, Պողոսը Հռովմայեցիս 3:25ում նշում է թէ՛ «Իր աստուածային երկայնամտութեամբ Նա այն առաջուց գործւած մեղքերի վրայից անցաւ», եւ Նա այս արաւ ի շնորհիւ այդ իրականութեան որ Իր Որդին ապագայում կ'մատակարարէր կատարեալ քառութիւնը, կ'պաշտպանէր Իր ուղղարարութիւնը, եւ կ'յագեցնէր Իր արդարութիւնը (Եբրայեցիս 10:11-12):

Մարդիկ Հին Կտակարանում լսեցին մէկ եւ նոյն աւետիս պատգամը, որը հռչակեց Ադամին ու Եւային պարտէզում անկումից յետոյ (Ծննդոց 3:15), նոյն աւետիսը որը Աբրահամը լսեց (Գաղատացիս 3:8), եւ նոյն աւետիսն որ Մովսէսը եւ մարգարէները լսեցին (Յովհաննէս 5:46, Ղուկաս 24:27, Գործք Առաքելոց 26:22-23): Եւ ուստի մարդիկ Հին Կտակարանում փրկուցին երբ նրանք հաւատացին եւ վստահեցին խոստացւած Մեսիային (Ծննդոց 15:6, Հռովմայեցիս 4:1-3, 22-25): Թէկուզ կան աշխարհքում բազմաթիւ կրօններ, սակայն իրականում դրանք բոլորը կարող են դասակարգուել երկու կրօնների, երկու ճանապարհների տակ՝ գործերի կրօնը, ուր մարդը կամ ինքնիրեն կամ Աստծոյ հետ (կամ իբր թէ աստուածների հետ) համագործակցութեամբ վստահուում է իր փրկութիւնը. եւ շնորհքի կրօնը, ուր փրկութիւնը բոլորովին Աստծոյ գործն է, ուր մարդը վստահում է Քրիստոսին, որը կատարեց բոլոր այդ ինչ որ պէտք էր եւ ընդունելի էր մեր փրկութեանը համար: Մէկ կրօնը «կատարելու» կրօնն է, իսկ միւսը «կատարւած» կրօնն է (Առակաց 14:12, Մատթէոս 7:13-27): Փրկութիւնը միշտ եղել է, ամէն դարում, միայն հաւատքով, միայն Քրիստոսով, միայն շնորհքով, եւ բոլորը միայն ի փառս Աստծոյ: